

6118

6119

6120

6121

24579  
24572

891.99

LL-68

891.99-3

Հրատարակութիւն Գ. Տէր - Խաչատրեանի

# ՎԱՅՑ ԿՈՐՉՈՂԻՆ...

(Վ Ե Գ Ի Ա)

„Ամենալաւ բանն աշխարհում սկըն է...  
Հեղի Պրոմետ:

„Յունով եմ, վաղ-ուշ, գարունը պիտ զայ.  
Գումառ-քաղիուայ:

Գ Բ Ե Յ

Ե Կ Խ Ո Ւ Գ Ր Ի Գ Ո Ր Ե Ա Ն

Թ Ի Ֆ Լ Ի Զ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ  
Типографія И. Мартиросіанца, Орбел. ул. д. № 1—2

1893



## Ի ԴԻՄԵՑ ՀԲԸՏՈՒԿՁԻՆ.

Ազնիւ ըարեկամ!

Սոյն ամենաչնչին լուման կարողանալով ձգել մասուկ գրականութեան գանձատուփը, իմ սրբազն պարտականութիւնն եմ համարում Ձեր անուամբ կնքել սորա երկրորդ թերթը—Ձեր անշափ ողորմածութեան համար, որ արիք ինձ՝ իմ վաղուցուան իղձերը ի կատար ածելով:

Ես մինչև այժմ (գուցէ և միշտ) ազատ ժամերս նուիրելով ձեր սիրարժան գործին, շատ անգամ տըհուուր նստած մտածում էի թէ ինչու համար է պահպանունքս, քանի որ մրոտած թղթերը արկղումս են մնում, այն ինչ շատերն են խնդրել և ցանկացել որ աշխատանքիս առաջին արգասիքը տպագրուած երենց առաջը տեսնեն:

Իմ նիւթական սղութեանս պատճառով նոյն մտատանջութեան մէջ խորասուզուած մնում էի: Ապրիլի 14-ին ինձ պատահելով, վաղուցուան իղձերս ի կատար ածելու լուրը յայտնեցիք, ասելով որ—հարկաւոր է ցենզօրի համար պատրաստել: Այդ Ձեր խօսքերից ես իսկոյն մտայ սենեակ, չնայած ժամերիս սղութեան, շոտպ շտապ արտագրեցի և միւս օրը յանձնեցի Ձեզ:

Այժմ, թէ ինչ բան եմ աչքի առաջ ունեցել սորա լոյս աշխարհ ընծայելու ժամանակ, կամ ինչ նպատակի է ծառայում, կամ ինչ պատճառով եմ զրել, այդ թղողնում եմ ճշմարտասիրաց:

Ձեր անունը, որ այժմ դրօշմուած է այս տետրակի ճակատին, յաւետ անմոռաց կը մնայ իմ մատաղ սրտում իւր անկեղծ արձանով:

որի վեպական խոշնոր մէջ եւ մասնաւ խթանով  
ըմբառուած ունի պայման նույս համար մասնաւ  
մասնաւ ունի առանձիւած ընդու պահար մասնաւ

Ա. ազգաւայր լուսաց յի անուն պահար մասնաւ  
ունի պահար առանձ ու զում նույս համար մասնաւ

Թիֆլիսի եօթներորդ քաղաքաբաժնի յետ ընկած  
փողոցներից մէկի վրայ կանգնած էր մի խարխուլ  
բնակարան, ուր պատսպարփում էին երեք հոգուց  
բազկացած մի թշուառ ընտանիք, որոնց նախակին  
կեանքը միանգամայն նախանձելի էր ամեն մի անհատի:

Երջանկութեան փայլուն աստղը իւր ոսկենաճանչ  
շողքերը ձգել էր այդ ընտանիքի յարկի վրայ, իւր  
թափաւորական գահը ամրացնելով, մինչ կենդանի էր  
կապալառու Սարգիս աղան, տան գլուխը՝ հովանաւու-  
րելով իւր փոքրիկ ընտանիքին: Հազարաւոր աչքեր  
երանի էին տալիս այն ընտանիքին, որ ապրում էր  
Սարգիս աղայի բազմայարկ շինութեան մէջ: Այդ  
գեղեցիկ շինութիւնը, ուր թագաւորում էին երջան-  
կութիւն, բաղդաւորութիւն, բերկրանք, այժմ կա-  
րելի է գտնել վշտի, հօգսի, տառապանքի լիահնիւն  
հառաջանքներ: Այս չկար կապալառու Սարգիս ա-  
ղան, որի լոկ անունը լսելիս, մի առանձնայատկու-  
թիւն էր տրփում մարդու նրա դէմքի կոպիտ ար-  
տայայտութեան վրայ գաղափար կազմելու...

Ամենայն օր նրա դռնից մի խումբ մշակներ, որ-  
մնադիրներ արհեստաւորներ բազկատարած անէծք

թափելով հեռանում էին, քրտնքով աշխատածի վարձը՝ չհատուցանելու համար...

Տարիների ընթացքում կեանքի ծանր հարուածից կապալառու Սարգիս աղան ցած իջաւ երջանկութեան փայուն գահից, կնքեց մահկանացուն, իսկ ունեցածն էլ յետելոց անյատացաւ...

Սարգիս աղան իւր մահուանից յետոյ անտէր թողեց Մարիամին՝ կնոջը և երկու որդւոց՝ Աստղիկին և Գարեգինին։ Գարեգինը տասնեւչորս տարեկան էր. նա մի թղթավաճառի մօտ աշակերտ էր. առաւօտները վաղ վեր էր կենում, երեսը լուանում, շորերը հագնում և մի կտոր հաց գրպանը դնելով, շտապում էր խանութ, որպէս զի չուշանաց, պատճառ՝ գիտէր խանութպանի բնաւորութիւնը, եթէ մի փոքր ուշանար անպատճառ գորս դու պատուիրեցիր—մի լաւ կը ծեծէր և էլ հայր ու մայր չէր թողնիլ։

Առաւօտները վաղ գնալիս խանութը փակ էր լինում, նա կանգնում էր խանութի մօտ մինչեւ խանութպանի գալը և հէնց որ աչքովն էր ընկնում, խկոյն առաջ էր վագում, բալանին ձեռքից առնում և խանութի գռները բացելով սկսում էր աւելել և ջուր սրսկել։

Գարեգինը միւս խանութպանների աշկերտների նման չէր, որոնք շաբաթ՝ զիշերները ստացած վարձը զանազան տեղեր փշացնում էին՝ այ նա մօրն էր տալիս, տան կարիքները հոգալու համար. բացի դըրանից կիւրակի օրերն էլ շուկայում էր փող ձեռք ձգում. Մի դառն վիշտ ճնշում էր Գարեգինի հոգին. որպէս ովկիանոսի ահեղ փոթորիկը նրա սիրտը մրրկում, ալեկոծվում էր, մտաբերելով իրենց նախ-

կին երջանիկ կեանքը, բաղդը, որոնց նա յիշում էր որպէս մանկական անեղ երազներ, մտաբերում էր և մի դառն այս քաշելով աւելացնում թէ՝ չզրկել ուրիշին, հէնց որի պատճառով էլ իրենք այնպիսի բարձր դրութիւնից աղքատութիւն ասած սոսկալի, սարսափելի հրէշի ժանիքների մէջ ընկած, տանջվում, մաշվում էին...

Աստղիկի տասնեութ գարունը լրանալու էր. նրա անունը մի-երկու տարուց յետոյ կը դրօշմուէր «պառուած» մականունով... հօր կենդանութեան ժամանակ, երբ հարուստ էին, նա մի անհոգ երեխաց էր, իսկ այժմ, երբ աղքատութեան մէջ տանջվում են, նա հասել է ամուսնական ասպարէզ մտնելու...

Աստղիկի գեղեցկութիւնը՝ չնայած ընտանեկան թշուառութեան, օրէցօր բազմապատկվում էր։ Նրա մետաքսանման մազերը, լուսնանման աչքերը, վարդագոյն այտերը, շրթունքները կատարեալ յաւերժ ահարսի կերպարանք էին նուիրում Աստղիկին. և այդ էր պատճառը, որ երկու արարածներ միմեանց հետ կատուած էին սիրոյ ամուր շաղկապով։

Սէրը, այդ էլէքտրական զօրութիւնը, որից զմայլուած բանաստեղծի գրիշը սլանում է հեռու և հեռու ամայի անապատը՝ կենսատու սիրոյ գաւազանով կեանք ներշնչելու...

Աստղիկն ու Բէգլարը այդպիսի զօրութեամբ միմեանց հետ հոգեսրապէս կցուել էին յաւիտենական ամուր շաղկապով, որոնց կցութիւնը ոչ մահ, ոչ կենդանութիւն չէին կարող քաշբայել։

Այդ սէրն էր, որ Աստղիկին ստիպում էր դրան ճեղքերից պարզ երկնակամարի տակ իւր սրտի սի-

րածի հետ երկար խօսիլ: Բէզլարին արդէն յայտնի էր նրանց թշուառութիւնը և նա իւր սրտում մի գաղտնիք ունէր, որի բացելուն մի յարմար առիթ էր փնտրում, թէ իւր և թէ Աստղիկի մօր առաջ: Մարգիս աղայի ընտանեաց վերջին յոյսը մնացել էր այդ բնակարանը, որ բաժանուած էր վարագուրով երկու մասի. առաջին մասում դարսուած էին մի քանի ամաններ, իսկ երկրորդ մասում կապած էր թախթ, որի վրայ ձգած էր մի հին, պատառոտուն կապերտ: Այդ թախթի վրայ, հին, կիսամաշ անկողնում կարելի էր տեսնել նախկին կերպասներով, ակներով պճնուած Մարիամին, որի սրտում արդէն բուն դրած վիշտը գիշեր և ցերեկ տանջում էր նըրան. այդ վիշտն էր Աստղիկի ամուսնական ասպարէզ բանալու պայմանների դժուարութիւնը, որին եթէ չգտէր, աշխարհային ամբարյականութիւնը, խայտառակութիւնը կարող էին իրենց սև կնիքը դրօշմել այդ աղջկայ վրայ, իրենց չարաբաստիկ ժանիքների մէջ գերելով: Սակայն ծնողական սիրտը երբէք չի կարող չ'դիմադրել այդպիսի խոչընդոտների, որոնք տեղի են ունենում ամեն մի դէպքում. Նրա խիղճը ոչ Յի անդամ հանդիսու չի լինի: Ո՛վ դիտէ մահուանից յետոյ ինչեր զլխովն անցնեն, ինչ փորձանքներ պատահեն... ժամանակը փչացած է... Այդպիսի մտատանջութեան մէջ ընկլիուած թէ բարոյապէս և թէ ֆիզիկապէս հալվում և մաշվում էր, ընտանիքի նեղսակիր դրութեան պատճառով:

Մարիամը թէ հիւանդ թէ առուղջ գնում էր սրանքա մօտ լուացք անելու կամ հաց թխելու, որոնցով կարողանում էր մի քանի կոպէկ ձեռք բե-

բել օրական պարէնը, հայթայիթելու համար: Աստղիկը իւր կուսական սրտի մէջ՝ հեռու մղելով թշուառութեան վիշտը, հոդսը, ունէր մի ազնիւ, մաքուր սէր, որ միայն պատկանում էր Բէզլարին, որով նա գտնում էր իւր ապագայ բաղդը, երջանկութիւնը և այդ սէրը նոր չէր, նա մանկական հասակից ի վեր սահած ունէր իւր սրտում: Ենցանում էին օրեր, ամիսներ, ձևու դաշն մասն Պակայն նրանք ընդ միշտ խելցեր, թշուառներ...

Արեգական ժամանակաշրջան:

Արեգական փայուն ճառագայթները սփռուել էին Մարիամի խրճիթի վրայ, որոնց տաք ազգեցութեան ներքոյ յացը ու աղջիկ նատած կար էին անում զլխաբարշ, և միմեանց հետ խօսելով, ապագայ երջանիկ կեանքի համար խրախուսում էին միմեանց:

Մարիամին այսօր մի առանձին տիրութեան ճիրաններում ամուր բռնած տանջում էին...

— Ճուտ արա աղջիկս, այդ անտէրը վերջացրու քանի փաղ է, չի եկել, որ գայ հօ դիտես նրա բնաւորութիւնը, որ պատրաստ չ'գտնի և վարձը չի աալ և հաշուանքներ կը թափի զլխներիս. ասում էր Մարիամը շտապեցնելով աղջկան:

« Իսկոյն, մայրիկ, իսկոյն, մի փոքր է մնացել... »

— Ապրիս, ապրիս, այդպէս շտապեցրու: Մինչդեռ մայր ու աղջիկ այսպէս միմեանց խրախուսում էին, յանկարծ մի սպայ երկու պոլիցիականներով հաստափոր պարոնի ուղեկցութեամբ ներս մտան ուղղակի տուն:

Հաստափոր պարոնը եւրոպական տարագով հազ-  
նուած էր. նա տէրողորմեան ձեռքին համրելով մօ-  
տեցաւ Մարիամին.

«Տը, դէղի ինչպէս ես»

— Ի՞ն, փառք Աստուծոյ. Ձեր հարցնելով ողջ, ա-  
ռուռողչ:

Պարոնը քմծիծաղ տալով մի ներքին ուրախու-  
թեան ձայնի արձագանքից շացած, սկսեց ռուսերէն  
լեզուով խօսել սպայի հետ և դառնալով Մարիամին,  
ասաց.

«Լուսահոգի Սարգիս աղան, ինչպէս քեզ էլ յայտ-  
նի է, ինձ 400 մանէթ փող էր պարու. կենդանու-  
թեան ժամանակ քանի անգամ ուղեցի, բայց խեղճը  
ասում էր դեռ չ'ունիմ, շահով կ'ստանաս... Այսքան  
էլ համբերելուց յետոյ չեմ կարող համբերել. ես էլ  
մեղք եմ... այժմ տէրութեան օրինաց վճռին հա-  
մաձայն, երեք օրից յետոյ պէտք է այս տունը ծա-  
խենք, պարտքս վերցնելու համար... հիմա դու զի-  
տես, զիսիդ ճարը տես...»

Մարիամը պարոնից լսելով այդ խօսքերը, մի այն-  
պիսի դառն տպաւորութեան ենթարկուեց, որ կարե-  
լի էր խելագարի տեղ համարել... այլևս չկարողացաւ  
իրեն զսպել, հին վշտերը նորոգուեցին...

Թշուառութիւնը մենակ չէ գալիս. սա մի բնա-  
կան օրէնք է, որ անսահման ժամանակից ՚ի վեր,  
վերին նախախնամութեան լոկ խօսքով իրականու-  
թիւն է դարձած:

— Աստուած վկայ որ հացի գինը հազիւ ենք գլո-  
նում, մեզ ով է տուել որ տան վարձ տանք, կամ  
մեզպէս անձարներին տուն ով կը տայս Աղա, երկու

անձար զաւակներիս խնայիր, այս մի տունն էլ ձեռք-  
ներիցս մի լսիր:

— «Եւ որ որդիքս ուտել են ուզում, հագնել են  
ուզում, ուսում են ուզում, ամեն մարդ իւր Եօրդանի  
չափ է ոտները ձգում, աւելացրեց պարոնը... քո որ-  
դիքը կարող են ցամաք հացով օրերն անցկացնել,  
իսկ իմերը չեն կարող, այդ բոլորի համար էլ փող է  
հարկաւոր:

Մարիամն արձանացած լուռ կանգնած էր. նա  
մերթ պարոնին, մերթ սպաների երեսին էր նա-  
յում, որոնց դեմքերի արտայացութիւնից կարելի էր  
եղակացնել կատարեալ ատելութիւն դէպի խեղճերը,  
թշուառութիւնը:

Անէծք լքեալներին, վրէժ այդ բոլորին օգնողնե-  
րից... Եւ յայտնուեց վճռական րոպէն... ուր գնան,  
ում դիմեն...

Գիշեր էր... պայծառ լուսինը կապոց երկնքից  
խաղաղ նայում էր մոաց երկրին... Փարեզինը մի  
թաշկինակում ինչ որ լցրած եկաւ տուն... նստեց  
թախթի վրայ, իսկ մայրը ոչինչ չ'ասաց այդ օրուաց  
դէպքից, որպէս զի որդին չ'վշտանայ... Նա փոքր  
է, դարդ չանչ... Մի քանի ժամից յետոյ նրանք  
պարկեցին քնելու... Սմեն ինչ քնած էր:

Գիշերացին դիցուին իւր լայն թևերը սփռել էր  
նիրհող մարդկութեան վրայ, պատսպարելով ամենայն  
տեսակ չարութիւններից... քնած են մարդկացին չար  
մտքերը... Մարիամը չէ մասնակցում գիշերացին ան-  
դորրութիւնը վայելող անձանց... Նա թէպէտ պար-  
կած էր անկողնում, սակայն մտատանջութեան մէջ  
իւրաւ ուզուած, զանազան վշտալի տեսարաններ,

որոնք մինը միւսին յաջորդելով գալիս էին, հանդիսատես էր լինում, նրա ալետանց հոդուն տառապեալ աշխարհում աւելի տանջելու...

Նա թափառում էր երազների աշխարհում... նրա առաջ հանդիսանում էր մի բարձր, կանաչազարդ լեառն, որի գագաթից ինքը ցած էր գլորվում. ստորոտին մօտ կանգնած էր Աստղիկը, նա մերթ ժպտում էր մերթ տիրում, մերթ արտասպում... Նա խելագար էր...

Տեսնում էր՝ մի գերեզման իւր համար պատրաստի... Գարեգինը չ'կաց, Աստղիկն էլ փողոցէ փողոց շրջելով ամօթխածութեամբ պարզում է ձեռքը ողորմութիւն հացելով. ամբարյականութեան կնիքն արդէն դրօշմուած է Աստղիկի վրայ... և այսպիսի բազմաթիւ երազներ անհանդստացնում էին Մարիամին կորզելով նրանից՝ դիշերացին հանգստագուարճ անդորրութիւնը:

Ըռաւօտեան Մարիամը վաղ զարթելով, Աստղիկին ու Գարեգինին էլ զարթեցրեց, իսկ ինքը գնաց հարեան Սալօմէի տուն, իւր ապագայ քամբաղդութեան մասին պատմելու.

Սալօմէն, որ Մարիամի նախկին երջանիկ կեանքի հետ ծանօթ էր, լսելով նորեկ դժբաղդութեան լուրը, բարեհաճեց տալ իւր ամենայետին ներքնատուններից մինը:

— Եկէք, բնակուեցէք, մինչև տեսնենք Աստուածին ա հրամացում:

Սալօմէն կապալառու Սարգիս աղայի գործակատարներից մինի կինն էր, որի ամուսինը Սարգիս աղայի աշխատանքի ամենաթարմ պտուղն էր վայե-

լում նրա կենդանութեան ժամանակ, և հէնց դրանից էր, որ այժմ իւր ընկերակիցների մէջ նշանաւոր դեր էր խաղում: Քանի որ Սարգիս աղան կենդանի էր, խեղճաղբատ էր երևում, որպէս զի ոչինչ ըլ կասկածուի, իսկ այժմ Սարգիս աղայի փառաւոր պայտաների տէրն էր դարձել և ացգապարտքն էլ նրա խօսքովն էր եղած:

— Աշխարհս գմակ, տղէն դանակ, կտրէ ու կերչ, ասում էր գործակատարը: Նրա համար նշանակութիւն չունէր խեղճը, աղբատը, իսկ թէ հարցնէիր ինչու առաջ խիղճ էիր, այժմ հարուստ, նաև կը պատասխանէր—իմ հալալ աշխատանքով...

Հասաւ այն օրն, երբ Մարիամէնց միակ լսրմին էլ ուրիշի սեպհականութիւն պիտի դառնար... Մարիամն ու Աստղիկն ունեցաները հաւաքելով տարան հարեան Սալօմէի ներքնատունը: Ահա պարտադերը մի քանի մարդկանցով եկաւ. մի փոքր այս ու այն կողմը նացելով, յացնեց Մարիամին, (որը կանգնած էր մի անկիւնում) թէ տունն էլ որ ծախսն, դարձեալ ամբողջովին պարտքը չի վերջանում, տանն էլ ոչինչ չունի, որ գոնէ մի մասը վերցնէ:

Երեկոյեան դէմ էր. ամպերը կուտակուել էին մի գամած երկնքում... երկնակամարը լուռ նայում էր աշխարհին... անձրւը տեղում էր... Նոր բնակարանումն անձրւի փամփուշտներից լեռներ էին կազմվում... Գարեգինը գալով լսանութից, զարմացած մնաց, երբ իրանց տանը ոչ ճրագ, ոչ լոյս չ'տեսաւ այս

ու այն կողմն դիտելով, աչքովն ընկաւ. մացրը, որ դէպի ինքն էր գալիս.

—Ի՞նչ ես շինում այդտեղ, մացրիկ: որդի ու զինչ որդի, հիմա այդտեղ ենք բնակուելու:

—Հապա մեր տունը:

—Մեր տունը տէրը տարաւ. ասաց Մարիամը մի առանձնայատուկ վշտալի դէմքով և բռնեց որդու ձեռքից:

—Բա ինչու չ'ասեցիր որ այսպէս խեղճ ենք, անձար են, այդ մի տունն էլ որ խլում է, որտեղ պէտք է կենանք:

—Ասեցի, որդի, ասեցի, ասաց Մարիամը և պատմեց հաստափոր պարոնի ասածները:

—Գարեգին ջան, ցիշում ես որ հացրիկդ իւր վերջին հիւանդութեան ժամանակ բոլոր այն բարիքներն որ տուել էր մեզ Աստուած վայելելու, մինը միւսին հետելով անյատացան, չքացան. Այդ անխիզը մեր վերջին յոցիցն էլ զրկեց մեզ: Դա Սալօմէի ամուսինն է, որի այժմեան հարստութիւնը ոչ թէ իրենը՝ այլ քոնն է, քէզ է պատկանում:—Էհ, Աստուած մեծ է, ողորմութիւնը շատ. ժողովրդական առած է սա, որ իւր մէջ բաւականին ճշտութիւն ունի. Ինչպէս որ հօրդ ձեռքից մինը միւսի յետեկց կորան, յուսով եմ որ ապագայումը դրանից էլ կ'կորչին...

Տեսնում ես այս բորբոսնած տունը, աղայանք, պաղատանք եմ արել, հազար անդամ ոտքերն ընկել, որպէս դի չ'խնայի, տայ, պատսպարուելու համար, այս էլ քիթը վեր քաշելով է տուել, կարծես հօրդ արած լաւութիւնը քիչ է եղել... բայց երբէք չ'յու-

սահատուես, յուսահատութիւնը մահ է... մարդս երբէք չպէտք է պարծենայ թէ ինքը հարուստ է, երջանիկ է, բաղդաւոր է, որովհետև վայելում է Երկնաբնակ անմահ Արարչի բարեաց պտուղները, նրա անհուն և անսահման սիրալի հովանաւորութեան ներքոյ, և չպէտքէ տրտնջայ թէ ինքը թըշուառ է, խեղճ է քամբաղդ է, որովհետև այն, ինչ որ իւրացիններն են վայելում, ինքը գուրկ է... անջատուած է...

Կեանքը մի փոփոխական անիւ է, որ ամենժամանակ և ամեն դէպում վայր ՚ի վեր անելով, ցածացնում և բարձրացնում է մարդկանց:

Կեանքը մի փոփոխական տարեշրջան է, որ մէկ լինում է գարուն, մէկ աշուն և մէկ ձմեռ...

Այսօրուայ բաղդաւորը վազը կարող է անբաղդ լինել, իսկ այսօրուայ անբաղդը վազը՝ բաղդաւոր... սա մի իրականութիւն է, որ աշխարհիս սկզբնառութիւնից մինչև ցայծն գուցէ և ց'կատարածն աշխարհի այդպէս եղել է, և այդպէս էլ կ'լինի... Այստեղ նա ցիշեց իւր

Մանկութեան օրեր երազի նման

Անցաք, գնացիք, ալ չէք դառնալու...  
շեշտեց վերջին խօսքերը: Այս բոլոր իմ ասածները ես սովորել եմ և երազների պէս ցիշում եմ լուսահողի Տէր Պէտրոսի խօսակցութիւնից: Իմ աղջիկ ժամանակ իգական սեռը ուսումնարան չէր գնալ. դա մի մեծ բամբասանք էր. ուսումնարանը միայն տղաների համար էր... աղջկայ գործը տանը նստել և կար անելն էր... հայրս Տէր Պէտրոսին ամենայն օր մեր տուն էր ուղարկում, որը գալիս էր դաս էր

տալիս և կեանքի մէջ յաճախակի պատահողադէպէ պէքէրը բացատրում...

Խեղճութիւնը, աղքատութիւնը ամօթ չէ... հարստութիւնն էլ մի մեծ պարձանք... բոլորս էլ բաժանուելու, անջատուելու ենք այս մնափառ աշխարհից... վերջին դատաստանի օրը՝ երբ իւրաքանչիւրնը ստ գործոց իւր հատուցումն պէտք է ստանայ, Քրիստոս կ'ասէ առաջիններին.

— Եկէք իմ հօր օրհնուածներ, ժառանգեցէք յաւ-  
կտենական երջանկութիւնը, որովհետեւ երբ ծարաւ  
էի խմացրիք, երբ քաղցած էի կերակրեցիք, երբ  
մերկ էի հազցրիք,

— Տէր քեզ երբ տեսանք կամ ծարաւ, կամ քաղցած կամ մերկ և խմացրինք, կերակրեցինք, հազցրինք:

— Ինչոր ուրիշին արիք, ինձ արիք:  
Երանի ձեզ ո՞վ խեղճեր օգնողներ, տառապեալին,  
վշտակոծին, զրկուածին բերկրողներ: Բայց վայց ձեզ  
հարստաշարիչ, կեղեքիչ, յափշտակող, աւերող, օրա-  
կան հացը ձեռքից խողներ, որովհետեւ ոչ այս կեան-  
քումն է ձեր խիղճը հանգիստ և ոչ հանդերձեալու-  
մը կը լինի հանգիստ, երջանիկ, ազատ... յաւիտենա-  
կան տանջանքը պատրաստի է ձեզ համար, գնացէք,  
ժառանգեցէք...

Մարիամը սուրբ գրքից բաւականին տեղեկութիւն  
ունենալով, ամեն դիշեր երկու զաւակին իւր շուրջն  
էր նստեցնում և Քրիստոսի վարք ու բարքը պատ-  
մելով, խնդրում էր որ նրա օրինակին հետեւն, նրա  
անտահման բարութեան մի մասնից էլ իրենք անեն  
զրկուածին, տառապածին...

— Մարդ այն ժամանակէ անմոռաց մնում ժողո-  
վրդի բնականում, երբ որ նա լինում է բարի, ազնիւ:  
Նմենայն բան մեռնում է, միայն բարի դործը չէ  
մեռնում: Բարութիւն արա որքան կարող ես... ծա-  
ռացիր ընկօրդ բարութեան օգտին, ծառացիր բարօ-  
րութեան բարգաւաճման, աղջի, հայենիքի համար  
և դուք կը կենդանի արձանով յաւէտ անմոռաց կը  
մնաս...այս ով միշի գործի ով ու կրիս մասնական  
միժուալ ու առողջեա և նորմար խնութեա ու ավա-  
գուայական ամ ու յանապահ թուր և  
կանչուր ով պայակ ամ և նուազարա իսու:

Արդէն երկու բոլորակ տարի անցել է այն օրից,  
ինչ որ Մարիամենց միակ խրճիթը վաճառուեց: Եր-  
կու տարուան ընթացքում կեանքը աւելի դառնա-  
ցած, թունալի օրհաս է պատրաստել այդ թշուառ  
ընտանիքի համար:

Ֆիկին Մարիամը թէպէտ և՝ «Զօրեղ զգացմունք-  
ներից ալեկուուղ սիրտն էլ ունի իւր կապրիզներն,  
ինչպէս ովկիանոսն ահեղ փոթորկի ժամանակ», սա-  
կացն իւր նեղակիր դրութեան հասնելու առաջին  
օրից՝ հոգեկան բարձրագոյն ճնշումների ղեկավարու-  
թեան ներքոյ տանջփում էր, բայց այդուամենայնիւ  
դեռևս նրա մէջ արմատախիլ չէին եղել ապագայ  
երջանիկ կենաց յուսոյ բարձր գաղափարները... նա  
միշտ հետեւում էր այն իդէալին, որ ամենախորին  
զգացմունքով ողջունում է հնապաշտութեան, երկր-  
պագու կանգներով ֆատալիզմին... իսկ հակառակ  
գէպքում երբ մարդկացին գաղափարները զրահաւա-  
րուած լուսաւոր գիտութեամբ այդ հնապաշտութեան  
զէմ ոլսերիմ թշնամու պէս կովում, մաքառում են,

արմատախիլ անելու համար թէ բարոյապէս և թէ ֆիզիքապէս արմատացած ժողովրդի սրտերում, նա այդպիսի գաղափարները համարում էր անախրոնիզմ, աւելացնելով որ մարդկացին մտքերը գեռևս խաւարապատ, միզամած են, հարկաւոր է լուսաւորութիւն...

Նա տանում էր ճակատագրի խիստ հարուածը... Փամանակն արդէն իւր ակօսը ձգել էր նրա ճակատին: Նա հիւանդ պարկած է անկողնում... Աստղիկն էլ տան վաճառումից յետոյ մի առանձնայատուկ վշտով առողջանուած, ոչ մի գործի ձեռք չէր զարկում:

Մի սարսափելի դև, իւր լայն բազուկները արձակած, բացարձակ տարածել էր, ամուր բունելով այդ թշուառ ընտանիքին իւր սոսկալի ժանիքների մէջ, տանջում ու մաշում էր: Այդ գեր աղքատութիւնն էր... Միակ յոյսն ու ապաւէնը Գարեգինն էր մնացել. նա էլ գեռևս փոքր էր, ընտանիք չէր կարող պահել. իսկ երբ մեծանար, ով զիտէ, ում պէտք է միսիթարէր, ում աչքը լուսաւորէր...

Մի օր, երբ Մարիամը իւր վերջին հրաժեշտի ողջոյն տալու պատրաստութիւն էր տեսնում, Գարեգինին ուղարկեց քահանացի մօտ, որպէս զի վերջինը դաց, Քրիստոսի արեան և մարմնի հետ կցորդի, զոնէ յաւիտենական աշխարհում հանդիստ և երջանիկ ապրելու...

Քահանան եկաւ, մասնատուփը հանեց, և սուրբ Հաղորդութեամբ միացրեց Քրիստոսի հետ, ապա նըստեց մօտը և մի քանի միսիթարական խօսքեր ասաց.

— Աստուած ողորմած է աղջկադ մի տէր կը դժունես, տղէդ էլ կը մեծանայ, նրանից յետոյ փառք Աստու-

ծոյ ինչպէս առաջ լաւ ապրել էք, դարձեալ լաւ կապրէք, կը վայելէք Աստուծոյ բարիքը...

— Տէրտէր ջան, ես էլ այդ եմ մտածում, ուրէ, Աստուած լսէ քո բերանից, հէնց էտ աղջկայ վրայ եմ մտածում, մի տէր, տիրական չունենք, որ սրա բաղդը բացէ, Ժամանակը փչացել է, թէ փող ունես, բաժինք ունես, հօ լաւ տղայ կայ, թէ չէ՝ գնայ և ջուրն ընկիր. այս է պահանջում ներկայ դարը...

Քահանան երկար միսիթարական խօսքեր ասելուց յետոյ հեռացաւ:

Գարեգինը մօր հիւանդութեան պատճառով խանութիւնում չէր գնում, այլ նստած մօտը, քրոջ հետ տըլիրադէմ նայում էր մօր այլայուած դէմքին:

— Վայ Աստղիկ ջան, մի ճիչ արձակեց Գարեգինը, այս ինչ է անում մայրիկը. Աստղիկը, որ մօր ոտքերի տակ, ձեռքի վրայ յենուած էր, իսկոյն տեղից թռաւ հարեաններին օգնութիւն կանչելու. Հարեւաններն եկան. բայց ուշ էր, նա արդէն յաւիտենական խոր քնի մէջ ընկղմուած էր...

\* \*

Երեք օրից յետոյ, մի քահանայ տիրացուի հետ շարական երգելով մի քանի մարդկանց հետ մի դադաղ դէպի Խոջիվանքի գերեզմանատուն էին տանում Գարեգինը յետելից լալով:

Գարեգինը դարձեալ գնաց խանութիւն, իսկ Աստղիկը հարեաններից մինի մօտ ծառացելով, կարողանում էր պատսպարուել աշխարհացին գարշելի կեղտոտութիւններից...

Աստղիկը զիշերացին հանգստութիւնից օգուտ քա-

ղելով, իւր սիրածի՝ Բէզլարի հետ տեսնվում էր... Մօր սիրաը միշտ ցաւում է որդու պակասութեան, թշուառութեան վրայ, սա մի բնական օրէնք է... Մարիամն ամեն գիշեր երազում երևում էր Աստղիկին ընդ միշտ տխուր, տրտում, որովհետեւ երկու զաւակներին միայնակ էր թողել:

Մի օր առաւօտեան Աստղիկը տանուտիրոջը պատմեց իւր տեսած երազը:

—Մայրս այս գիշեր երազում ինձ տալով մի կապոյ, որի մէջ ակներ և մարգարիտներ էին լցուած, ասաց—աղջիկ, հիմա ես հանգիստ կը լինեմ, գնա Տէր ընդ քեզ, քո բաղդը բացուել է... Այսուհետեւ երջանիկ կ'ապրես...

Տանտէրը բացատրեց երազը, աւելացնելով,

—Լաւ մարդ կը ճարես, ի հարկէ բաղդաւոր, երջանիկ կ'ապրես.

## Ե.

Մելիք Աղասար չայկակեանն Երևանեան նահանգից գաղթելով Թիֆլիս, իւր հետ բաւականին հարստութիւն էր ցերել: Մարիամէնց տան գիմաց զըտնուող գեղեցիկ շինութիւնը—այդ Մելիք Աղասար չայկակեանին էր պատկանում, որի միակ զաւակը՝ Բէզլարը Աստղիկի հետ սիրոց ամուր շաղկապով միացած էր գաղուց: Թէպէտ Մելիք Աղասարն այժմ կենդանի չէ, սակայն նրա միակ զաւակ Բէզլարը հօր կառաւարութեան ղեկը ձեռքն առնելով, հարստութիւնը օրէցօր բազմապատկում էր...

Նրա համար քարիցն էլ կարելի էր փող հանել,

ամեն տեղ, ուր կայ աշխատանք, ուր կայ տոկունութեան եռանդ, այնտեղ չ'կայ հառաջանք... Բաց այն գաղտնիքը, որ Բէզլարի սրտումն էր, նրան գլուշեր ու ցերեկ հանգստութիւն չէր տալիս: Եթէ այդ գաղտնիքը բացուէր և իրազործուէր, այն ժամանակ «փող ու հող» Բէզլարի համար մինչենոյն էր:

Բէզլարի մայրն անհամբերութեամբ սպասում է որդու զալուն. նա մօտ երեք ամիս է Թիֆլիսում չէ գտնվում, գնացել է Կարին, ինչ որ գործի պատճառուի: Մի քանի օրից յետոյ Բէզլարի մայրը տեղեկութիւն ստացաւ որդուց մի ճանապարհորդից, որը յայտնել է թէ ճանապարհին հիւանդանալու պահճառուկ յետածգուեցաւ:

Մայրը միակ զաւակից լսելով այս տիսուր լուրը, սաստիկ մտատանջութեան մէջ, զանգան նախապաշարմունքներ զլիսումը դիպուեց այս կամ այն մարդու մօտ է գնում ճիշտն իմանալու:

Մի գեղեցիկ օր, երբ արեւ նոր էր իւր ոսկենաճանչ ճառագայթները սփուել երկրի վրայ, մի կառք Մելիք Աղասարի տան դրան առաջ կանգ առաւ, որից իջաւ Բէզլարը:

Մայրը սաստիկ կարօտով փաթաթուեց որդու զզին, և ջերմագին համբոցը կնքելով ճակատին, տարաւ ներս: Եցաւեղ Բէզլարը մի առ մի պատմեց մօրը զլիսովն անցածը, աւելացնելով որ՝ ճանապարհին պատահեցին մի քանի աւագակներ, որոնք հեռուու տեղից փախսել, եկել էին այդ տեղ թագիսցել, անցուորականներին թալանելու:

Ես ուխտեցի որ եթէ ովզ, աւուուղ ավատուեմ, Թիֆլիս հասնելուն պէս մի չքաւոր աղջկաց հետ ա-

մուսնանամ, այժմ քո համաձայնութեանն եմ սպասում...

Զ.

Թիֆլիսի եօթներորդ քաղաքաբաժնի որ թաղովն անցնէիր, որ մի նոր լուր ականջիդ տակովն չանցնէր, Այդ նոր լուրը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ կապալառու Սարգիս աղայի դուստր Աստղիկի բաղդաւորութեան հասնելը:

Բէզգլարի մայրը վաղուց տեսել էր Աստղիկի գեղեցկութիւնը և որդու նրա հետ ունեցած սիրային յարաբերութիւնները լսելով հանգերձ, նախկին երկու սիրահարների համար մի երանաւէտ կեանք էր պատրաստվում:

Մի շաբաթից յետոյ Բէզգլարը մօր համաձայնութեամբ թէ բարոյապէս և թէ ֆիզիկապէս միանալու էր Աստղիկի հետ:

— Խեղճ Մարիամ, խօսում էին հարեանները, գիշեր ցերեկ մտատանջութեան մէջ հալուած, մաշուած էիր թէ աղջկաս բաղդը կաշկանդուած է, տէր, տիրական չունեմ որ մի ճար անի, կը մեռնեմ ով գիտէ գլխովն ինչ փորձանքներ անցնեն, ժամանակը փչացել է... հիմա զարթիր, տես թէ աղջիկդ ինչ փառքի, երջանկութեան է հասնելու,

Բէզգլարն ու Աստղիկն արդէն պսակագրութեան մասին միմեանց յայտնել էին, բերկրանաց լիահնչիւն ձայների քաղցրագոյն արձագանքները հնչում էին Աստղիկի և Բէզգլարի ականջներին. երկուսն էլ ուրախ, գուարթ էին... երկուսն էլ միմեանց սիրում

և յարգում էին... Ուրախ էր մանաւանդ Բէզգլարը, որ վերջապէս վաղուցուան ցանկութիւնը կատարուելու էր... և մօր սիրու շահեցնելու համար զանազան կատակներ էր անում հետք:

Է.

Մի շաբաթն էլ անցաւ... Բէզգլարն ու Աստղիկն արդէն յաւիտենական ամուր շաղկապով՝ ըստ պահկադրութեան սուրբ օրէնքների միացել էին,

Նրանք ապրում էին խաղաղ, երջանիկ և սիրով. Աստղիկի հօր տան մէջ թագաւորող երջանկութեան աստղը խոր ոսկեճաճանչ ծիրանեգոյն շողքերը տարածել էր կապալառու Սարգիս աղայի դստեր և ուստեր վրայ, հովանաւոր ընտրելով Երեւաննեան նահանգից գաղթող հարուստ վաճառական Մելիք Աղասար հայկակեանի միակ գաւակ Բէզգլարին...

Վ Ե Ր Ձ

պատրիք բնակած ու սպառ ամեն եւ ըստ ու ամեն ու ամեն  
առաջակա ու ավելի առաջ ու առ առաջ անդաշնչ ու  
այս առաջակա ու առաջ առաջ առաջ ու ամեն ու ամեն  
պատրիք եւ ամեն ու ամեն ու ամեն ու ամեն

միջնակ առ մասք առ ուրեմ առ միջնակ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ

6118  
6119  
6120 6121  
24571  
24572

2018

